

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

25 հունվարի 2017թ.

ք. Ստեփանակերտ

<<Արցախի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի նիստի

Խորհրդի 28 անդամներից ներկա էին 26-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱրՊՀ ռեկտորի 2015-2016թթ. ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվության մասին:

Ջեկուցող՝ Մ.Մ.Մինասյան

2. ԱրՊՀ ՊՈԱԿ-ի 2016թ. ֆինանսական տարվա արդյունքների մասին:

Ջեկուցող՝ գլխավոր հաշվապահ Ն. Յու. Գրիգորյան

3. ԱրՊՀ ՊՈԱԿ-ի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի մասին:

Ջեկուցող՝ գլխավոր հաշվապահ Ն. Յու. Գրիգորյան

4. Այլ հարցեր

ԼՍԵՑԻՆ

1. ԱրՊՀ ռեկտորի 2015-2016թթ. ուսումնական տարում կատարած աշխատանքների հաշվետվության մասին:

2. ԱրՊՀ ՊՈԱԿ-ի 2016թ. ֆինանսական տարվա արդյունքների մասին:

3. ԱրՊՀ ՊՈԱԿ-ի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծի մասին:

Ելույթներով հանդես եկան ԱրՊՀ պրոռեկտորներ Վ.Յարամիշյանը, Վ. Ավանեսյանը, բնագիտական ֆակուլտետի դեկան Վ. Միրզոյանը, հ.գ.թ., դոցենտ Լ.Ղարախանյանը, Հոգեբանություն մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ա. Սևումյանը:

ԱրՊՀ պրոռեկտոր Վ.Յարամիշյանը ներկաների ուշադրությունը սևեռեց երկու խնդրի վրա:

1) ԱրՊՀ ուսանողական խորհուրդը երկրի ամենախոշոր երիտասարդական կառույցներից մեկն է և զգալի ջանքեր են ուղղվում նրանց համախմբելու ուղղությամբ: Այս երևույթն ավելի

ցայտուն ընդգծվեց 2016թ. ապրիլյան դեպքերի ժամանակ, երբ գրեթե բոլոր տղաները մեկնեցին առաջնագիծ, իսկ աղջիկները մեծ խմբերով կամավորական աշխատանքներ էին կատարում իրային և պարենային պահեստներում: Ապրիլն ավարտվեց, ամեն ինչ իր տեղն ընկավ, իսկ մեր ուսանողների կատարած հայրենանվեր աշխատանքը մնաց չգնահատված:

Երկրորդ խնդիրը նույնպես առնչվում է երկրի ներքին անցուդարձին ԱրՊՀ մասնակցության բարձրացմանը: Համալսարանն ունի համապատասխան ներուժ և վճռականություն՝ լավագույն, այդ թվում՝ հրավիրված մասնագետների ուժերով սոցիալ-հոգեբանական և գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, հատկապես երկրի սահմանամերձ բնակավայրերում և բանակի զորամասերում: Առաջարկվեց ստեղծել սոցիալ-հոգեբանական հետազոտությունների կենտրոն, պատվերներ ընդունել տարբեր գերատեսչություններից և ձեռնամուխ լինել այդ կարևոր գիտական խնդրի կատարմանը:

Տարվա ընթացքում ԱրՊՀ ռեկտորի կատարած աշխատանքը ակնառու է, ինչպես ակնառու է առաջընթացը բոլոր ուղղություններով:

Խորհրդի անդամ Վ. Ավանեսյանը իր ելույթում կարևորեց գիտական աշխատանքների պետական ֆինանսական աջակցության առկայությունը: Առաջարկեց համալսարանում գիտական կենտրոն հիմնել և աշխատել կոնկրետ թեմաների ուղղությամբ՝ առաջնահերթությունը տալով թեմաների արդիականությանը, կիրառական նշանակությանը և ամբիոնի գիտական ներուժին:

Նա ևս առաջարկեց ԱրՊՀ ռեկտորի աշխատանքը գնահատել բավարար՝ ընդգծելով գիտական գործունեության աշխուժացումը հաշվետու ժամանակաշրջանում:

Բնագիտական ֆակուլտետի դեկան Վ. Միրզոյանը իր ելույթում առանձնացրեց հետևյալ հարցերը՝ ֆակուլտետի շենքային պայմանների բարելավման հրատապությունը և դիմորդների թվաքանակի նվազման խնդիրը: Վերջինիս ուղղությամբ առաջարկվեց ժամանակավորապես բնագիտական ֆակուլտետում ընդունելության կազմակերպման գործընթացը ավելի դյուրին դարձնել (կազմակերպել առանց քննությունների):

ԱրՊՀ խորհրդի անդամ, հ.գ.թ., դոցենտ Լ. Ղարախանյանը իր ելույթում նշեց համալսարանում վերջին շրջանում նկատելի բարեփոխումների դրական ազդեցության աճի մասին: Հատկապես ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում զգալիորեն նպաստում է էլեկտրոնային դասախոսությունների առկայությունը: Համալսարանի ղեկավարության կողմից որդեգրած կրթական բարեփոխումների ռազմավարությունը, կարգապահության բարձրացումը նպաստում են ուսանողների

գիտելիքների հարստացմանը, վերլուծական, առողջ քննադատական մտքի ձևավորմանը: Համընթաց քայլերով ժամանակակից տեխնիկական պահանջների հետ համալսարանը կարողանում է ձեռքը կրթական գործընթացների զարկերակի վրա պահել:

Խորհրդի անդամ, հոգեբանություն մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Ա. Սևումյանը առանձնացրեց գիտական, մարզամշակութային, ճանաչողական միջոցառումներին, արտադրական փորձուսուցումներին մասնակցելու համար ֆինանսական միջոցների հայթայթման խնդիրը:

4. Այլ հարցերում խոսվեց՝

4.1. Խորհրդի անդամ, իրավագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Մայիլյանը Խորհրդի նախագահին խնդրեց քննարկման դնել և լուծում տալ ԱրՊՀ ՊՈԱԿ իրավական կարգավիճակի փոփոխության հարցին(վերակազմակերպել հիմնադրամ), ինչպես նաև ԱրՊՀ Խորհրդի անդամների իրավունքները և պարտականությունները հստակեցնել՝ նպատակ ունենալով նրանց դարձնել համալսարանի կառավարման մշտական(ոչ միանվագ) մասնակից:

4.2. Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Արմինե Բալայանը բարձրացրեց հանրակացարանի չնորոգված թնի սանհանգույցի վերանորոգման հարցը

ՈՐՈՇԵՑԻՆ

1. 2015-2016 ուստարվա ԱրՊՀ գործունեությունը գնահատել բավարար:

2. ԱրՊՀ գլխավոր հաշվապահ Ն.Յու.Գրիգորյանի՝ ԱրՊՀ ՊՈԱԿ-ի 2016թ. ֆինանսական տարվա հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

3. Հաստատել ԱրՊՀ ՊՈԱԿ-ի 2017թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Խորհրդի նախագահը ելույթներին անդրադառնալով նշեց, որ բարձրացված բոլոր խնդիրներն ու հարցերը կքննարկվեն և համապատասխան լուծումներ կստանան:

Խորհրդի նախագահ՝

Ա.Վ.Ղուլյան

Քարտուղար՝

Ա.Ի.Պողոսյան